# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Սյուզաննա Մնոյանը, Թեհմինե Պողոսյանը, Համլետ Սահակյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորաին Հակոբյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը**

Լսեցին

***ՄԱՆՎԵԼ ՎՈԼՈԴԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/ԶԵկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Մանվել Վոլոդիայի Հարությունյանին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակել Մանվել Վոլոդիայի Հարությունյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Լսեցին

***ՎԱՐԴԳԵՍ ՄՈՎՍԵՍԻ ԲՈՅԱՋՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/ԶԵկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Վարդգես Մովսեսի Բոյաջյանին Ծաղկահովիտ

համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակել Վարդգես Մովսեսի Բոյաջյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ն/

Լսեցին

***ԱՐԱ ՄԻՇԱՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(/Զեկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Արա Միշայի Հովհաննիսյանին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակել Արա Միշայի Հովհաննիսյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ***

*(/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2022 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ / ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ/ ՍՏԱՆԱԼՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՆՈՐԱՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ / սուբվենցիաներ / ստանալու 2023 թվականի ծրագրային հայտերը հաստատելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ / սուբվենցիաներ/ ստանալու 2023 թվականի ծրագրային հետևյալ հայտերը՝
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր, Բերքառատ, Հնաբերդ, Գեղադիր, Նորաշեն բնակավայրերի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցում,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի Շիրակացի և Բժշկյան փողոցների հիմնանորոգում և ասֆալտապատում,
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի մշակույթի տան հիմնանորոգում ։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, 90-րդ հոդվածի 4-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի բյուջեի ֆոնդային մասում կատարվող ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման փաստի մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 45 227 070 /քառասունհինգ միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար յոթանասուն/ ՀՀ դրամ հատկացնել բյուջեի ֆոնդային մաս՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ն/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի ներկայացրած համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային գույք ձեռք բերելու անհրաժեշտությունը, համայնքի ավագանին **որոշում է .**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 995.000 /ինը հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ն/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 62-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1.Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2022 թվականի նոյեմբերի 24-ի հերթական նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:
3. Մանվել Վոլոդիայի Հարությունյանին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:
4. Վարդգես Մովսեսի Բոյաջյանին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:
5. Արա Միշայի Հովհաննիսյանին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս հատկացում կատարելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում հողամասերը վարձակալության / կամ / կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 22-ի N 45-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին :
9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ ստեղծելու, դրանց կազմը հաստատելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 8-ի N 40-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ 2022 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:
11. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները,իրականացման կարգը սահմանելու և ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 11-ի N 33-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
12. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Վարդաբլուր բնակավայրի «Վարդաբլուր համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին :
13. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Վարդաբլուր բնակավայրի օրվա կարգավորիչ ջրամբարը սնուցող խմելու ջրի ջրագծի կառուցման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին:
14. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի խմելու ջուր մատակարարող պոմպակայանի վերանորոգման նպատակով գումար հատկացնելու մասին:
15. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովում ավագանու անդամների անհատական և քանակական կազմը հաստատելու և Ծաղկահովիտ համայնքի ավագանու 18.12.2017թ. N 16-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
16. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ / սուբվենցիաներ / ստանալու համար 2023 թվականի ծրագրային հայտերը հաստատելու մասին:
17. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐԸ ՍՆՈՒՑՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջներով, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Վարդաբլուր բնակավայրի օրվա կարգավորիչ ջրամբարը սնուցող խմելու ջրի ջրագծի կառուցման աշխատանքների ծրագիրը 3 460 000 /երեք միլիոն չորս հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել գնման գործընթացը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՂ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Ծաղկահովիտ բնակավայրի խմելու ջուր մատակարարող պոմպակայանի վերանորոգման նպատակով հատկացնել 956 500 /ինը հարյուր հիսունվեց հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ն/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 33-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, « Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի **ավագանին որոշում է՝**

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նոր կարգը՝ համաձայն հավելվածի ։

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 11-ի N 33-Ն որոշումը։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ն/

Լսեցին
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով թիվ 17 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 2-ի « Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրությունների արդյունքներով Ծաղկահովիտ համայնքի ավագանի ընտրվելու մասին » թիվ 22-Ա որոշումը և 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին » N 9 արձանագրությունը , Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Ստեղծել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները.

« Քաղաքացիական պայմանագիր » խմբակցություն,

« Հզոր համայնք » խմբակցություն

« Հանրապետություն » խմբակցություն,

« Լուսավոր Հայաստան » խմբակցություն,

2. Հանձնարարել ավագանու խմբակցություններին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնել խմբակցության կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները և ազգանունները ։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ն/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ /ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N 45-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մաս պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքում հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում հողամասերը վարձակալության և /կամ/ կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.
- Նորայր Հակոբյան - համայնքի ղեկավար,
- Արայիկ Ավետիսյան - աշխատակազմի քարտուղար
- Մնացական Պողոսյան -առաջատար մասնագետ
- Արտակ Ներսիսյան - առաջատար մասնագետ
- Արծրուն Ավետիսյան - ավագանու անդամ
- Գևորգ Ղազարյան - ավագանու անդամ
- Մյասնիկ Պողոսյան - ավագանու անդամ

2. Մրցութային հանձնաժողովի կազմից անուրդավար նշանակել համայնքի ղեկավարին, իսկ արձանագրող՝ աշխատակազմի քարտուղարին ։

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 22.07.2022 թվականի N 45-Ն որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ , ԴՐԱՆՑ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 40-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի , Ծաղկահովիտ համայնքի ավագանու կանոնակարգի 21-րդ, 22-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Ստեղծել Ծաղկահովիտ համայնքի ավագանու մշտական գործող թվով երեք հանձնաժողովներ և հաստատել դրանց անհատական կազմը՝

ա) ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.
1. Միշա Մխիթարյան հանձնաժողովի նախագահ
2. Անահիտ Բոյաջյան - հանձնաժողովի անդամ
3. Արծրուն Ավետիսյան - հանձնաժողովի անդամ
4. Արթուր Հովհաննիսյան - հանձնաժողովի անդամ
5. հանձնաժողովի անդամ

բ) Մշակույթի, կրթության, սոցիալական և իրավական հարցերի մշտական հանձնաժողով,

1. Բավական Գևորգյան - հանձնաժողովի նախագահ
2. Արմինե Նավասարդյան հանձնաժողովի անդամ
3. Սյուզաննա Մնոյան հանձնաժողովի անդամ
4. հանձնաժողովի անդամ
5. հանձնաժողովի անդամ

գ) Քաղաքաշինության, հողօգտագործման և գյուղատնտեսական հարցերի մշտական հանձնաժողով.

1. Մանվել Հարությունյան - հանձնաժողովի նախագահ
2. Գևորգ Ղազարյան - հանձնաժողովի անդամ
3. Անահիտ Բոյաջյան - հանձնաժողովի անդամ
4. Հրաչիկ Միերյան - հանձնաժողովի անդամ
5. Մյասնիկ Պողոսյան - հանձնաժողովի անդամ

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 8-ի N 40-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ « ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ » ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, « Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին » ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ « Քաղաքացիական օրենսգրքի » 67-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի,«Վարդաբլուր համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն » համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 1.2 կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Վարդաբլուր բնակավայրի « Վարդաբլուր համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման հարցը հետաձգել լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու և հետագայում քննարկելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N 16-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու անդամներ՝

1. Մանվել Հարությունյան

2. Արծրուն Ավետիսյան

3. Արթուր Հովհաննիսյան

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 18-ի N 16-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ն/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Ծաղկահովիտ համայնքի ավագանին, **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 15-ը, ժամը 14:00-ին:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ն/

Լսեցին
***ՄԱՆՎԵԼ ՎՈԼՈԴԻԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*/Զեկ. ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Մանվել Վոլոդիայի Հարությունյանին Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ծաղկահովիտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակել Մանվել Վոլոդիայի Հարությունյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ն../

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱԿԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՈՌ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄՀԵՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՄՅԱՍՆԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՆՈՐԱԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ